

**Հայտերի ներկայացման հրավեր
«Մարդու իրավունքների հետազոտություն Հայաստանում. արդի և նոր
ձևավորվող հիմնախնդիրներ»**

*Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի
ինստիտուտի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողով: Գիտաժողովը
կազմակերպվելու է համագորակցելով Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի հետ
Երևան, 30 նոյեմբեր- 1 դեկտեմբեր, 2023*

*Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի
ինստիտուտն (այսուհետ՝ «ՌՎԻ») ուրախ է հայտարարել «Մարդու իրավունքների
հետազոտությունը Հայաստանում. արդի և նոր ձևավորվող հիմնախնդիրներ» միջազգային
գիտաժողովի կազմակերպման վերաբերյալ, որը տեղի կունենա 2023 թ. նոյեմբերի 30-
դեկտեմբերի 1-ին, Երևանում:*

*Կոնֆերանսի նպատակն է հարթակ տրամադրել համալսարանականներին,
իրավապաշտպաններին և քաղաքականություն մշակողներին՝ համատեղ ուսումնասիրելու
Հայաստանում մարդու իրավունքների արդի և նոր ձևավորվող խնդիրները: Հրավիրում ենք
գիտնականների, ուսանողների, ՔՀԿ ներկայացուցիչների և քաղականություն
մշակողներ/իրականացնողների ներդրումները, ինչպես նաև խրախուսում ենք հայտերը,
որոնք ցանկանում են կապ կառուցել ակադեմիական առարկաների, ինչպես նաև
տեսության և պրակտիկայի միջև:*

*Գիտաժողովը հանդիսանում է ՌՎԻ հայաստանյան 2022-2025 ծրագրի մի մասը՝ աջակցելու
Հայաստանում մարդու իրավունքների բարձրորակ հետազոտությունների իրականացմանը
և մարդու իրավունքների հետազոտությունների ոլորտում միջոլորտային
համագործակցության հնարավորություններ ստեղծելուն: Կոնֆերանսին մասնակցելու
համար ընտրված մասնակիցներին հնարավորություն կտրվի շարունակական
աջակցություն ստանալ 2024 թ.-ին՝ դրամաշնորհների և միջազգային հետազոտական
այցերի/փոխանակումների միջոցով զարգացնելու իրենց հետազոտությունները: Ընտրված
մասնակիցները հնարավորություն կունենան հրապարակել իրենց հետազոտությունները:*

Նախապատմություն

ՌՎԻ-ն ներկայումս իրականացնում է Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ
կարողությունների զարգացման ծրագիր՝ «Աջակցություն Հայաստանում մարդու
իրավունքների միջազգային իրավունքի և չափանիշների համապատասխանեցմանը՝ 2022-
25 թթ.» խորագրով: Ծրագրի ընդհանուր նպատակն է «Հայաստանում թիրախավորված
դերակատարների աշխատանքում մարդու իրավունքների միջազգային իրավունքի և
չափորոշիչների կիրառումը», ինչպես նաև, հատուկ աշխատանքային ոլորտներից մեկն է

աջակցել Հայաստանում մարդու իրավունքների բարձր որակի հետազոտությունների իրականացմանը:

Հայաստանում համալսարանականների, ՔՀԿ-ների և մարդու իրավունքների այլ դերակատարների շահագրգիռ կողմերի հանդիպումների և աշխատաժողովների արդյունքում ՌՎԻ-ն բացահայտել է մի շարք արդի և նոր ձևավորվող հետազոտական թեմաներ մարդու իրավունքների հայկական համատեքստում, որոնց աջակցմանն էլ առաջիկա տարիներին ուղղված կլինի ծրագիրը: Համաժողովն այսպիսով մաս է կազմում մարդու իրավունքների հետազոտությունների վրա կենտրոնացած աջակցության մի շարք միջոցառումների, որից հետո տեղի կունենան լրացուցիչ միջոցառումներ 2024 և 2025 թթ. ընթացքում:

Համաժողովի երեք հիմնական նպատակներն են՝

- Հայաստանում մարդու իրավունքների արդի հիմնախնդիրների շուրջ բանավեճի և քննարկման տարածք տրամադրել թեմաների ընդգործակցությամբ, ներառյալ մարդու իրավունքները և շրջակա միջավայրը, մարդու իրավունքները և գենդերը, արդարադատության մատչելիությունը, մարդու իրավունքները և կոռուպցիան, մարդու իրավունքները և հակամարտությունների կարգավորումը, եւ այլն:
- Մարդու իրավունքների հետազոտություններով զբաղվող գիտնականների, ուսանողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար տարածք առաջարկել՝ ներկայացնելու իրենց աշխատանքը և ստանալու արձագանքներ ազգային և միջազգային փորձագետներից:
- Խթանել և զարգացնել մարդու իրավունքների ոլորտի հայ հետազոտողների համայնքը՝ գաղափարների և տեղեկատվության համագործակցության և փոխանակման հնարավորության ընձեռնման միջոցով:

Հիմնական թեմատիկ ոլորտները

Մասնավորապես (բայց ոչ բացառապես) ողջունվում են կոնֆերանսի վերաբերյալ առաջարկություններ հետևյալ թեմաներով.

Մարդու իրավունքներ և շրջակա միջավայր

Համաժողովի «Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը» թեմատիկ սեսիան պետք է անդրադառնան Հայաստանում բնապահպանական խնդիրների և մարդու իրավունքների պաշտպանության կապին: Այս թեմայի վերաբերյալ հետազոտությունները կարող են ուսումնասիրել կլիմայի փոփոխության և մարդու իրավունքների խախտումների միջև կապը, ինչպես նաև բնապահպանական արդարությունը խթանելու հնարավոր լուծումներն ու ռազմավարությունները:

Դիմորդներն **ազատ են սահմանելու իրենց սեփական թեման** մարդու իրավունքների և շրջակա միջավայրի ավելի լայն ուղղության շրջանակներում, սակայն ստորև ներկայացրած են հետևյալ ուղղությունները.

- Կլիմայի փոփոխության ազդեցությունը մարդու իրավունքների վրա, ինչպիսիք են ջրի, սննդի, առողջության և ապրուստի միջոցների իրավունքները
- Բնապահպանական արդարադատություն և մաքուր և առողջ շրջակա միջավայրի իրավունք
- Մարդու իրավունքների միջազգային իրավունքի դերը բնապահպանական իրավունքների պաշտպանության գործում
- Բնակչության իրավունքները խոցելի իրավիճակներում և նրանց հարաբերությունը շրջակա միջավայրի հետ
- Կորպորատիվ հաշվետվողականությունը և դրա ազդեցությունը մարդու իրավունքների և շրջակա միջավայրի վրա
- Քաղաքացիական հասարակության դերը մարդու և շրջակա միջավայրի իրավունքների խթանման և պաշտպանության գործում
- Կլիմայի փոփոխության գենդերային ասպեկտները Հայաստանում
- Տեխնոլոգիաների և նորարարության դերը՝ խթանելու և պաշտպանելու մաքուր և առողջ շրջակա միջավայրի իրավունքը:

Մարդու իրավունքներ և գենդեր

Համաժողովի այս հատվածը նպատակ ունի բացահայտելու գենդերային խտրականության մարդու իրավունքների խախտումների կապը, ինչպես նաև, հատկանշել ռազմավարություններ բոլորի համար հավասարություն և արդարություն ապահովելու ուղղությամբ:

Դիմորդներն **ազատ են սահմանելու իրենց սեփական թեման** մարդու իրավունքների և գենդերի ավելի լայն ուղղության շրջանակներում, սակայն առաջարկները կարող են ներառել, օրինակ.

- Մարդու իրավունքների դերը Հայաստանում գենդերային հավասարության խթանման գործում
- Կանանց իրավունքները և գենդերային բռնությունը Հայաստանում
- Գենդերն ու օրենքը. գենդերային հավասարության վերաբերյալ Հայաստանի իրավական դաշտի ուսումնասիրություն
- Հայաստանում մշակութային նորմերի և ավանդույթների ազդեցությունը գենդերային հավասարության վրա
- Քաղաքացիական հասարակության դերը կանանց իրավունքների և գենդերային հավասարության առաջխաղացման հարցում
- Կանանց հզորացում և առաջնորդություն: Պրակտիկան և լավագույն փորձը Հայաստանում
- Գենդերը, աղքատությունը և անհավասարությունը Հայաստանում
- Փոխհատվածություն. գենդերային, էթնիկ պատկանելության, կրոնի և այլ սոցիալական ինքնությունների միջև կապերը Հայաստանում

- Լրատվամիջոցների դերը Հայաստանում գենդերային հավասարության խթանման և գենդերային կարծրատիպերի դեմ պայքարում
- Տրանսգենդերների իրավունքները և սեռական բազմազանությունը
- Ինչպես առաջ շարժվել. Հայաստանում մարդու իրավունքների և գենդերային հավասարության առաջխաղացման ռազմավարություններ, քաղաքականություններ և նախաձեռնություններ:

Արդարադատության մատչելիության

Այս բաժինը հրավիրում է գեկուցողների, որոնք կուսումնասիրեն Հայաստանի արդարադատության համակարգի ներքո մարդու իրավունքների արդյունավետ իրականացման հետ կապված խնդիրները, ներառյալ պետական հաստատությունների հաշվետվողականության խթանումը, մարզինալացված համայնքների իրավական ներկայացուցչության բարելավումը և ոչ պետական կազմակերպությունների դերը մարդու իրավունքների պաշտպանության և ջատագովության գործում՝ ինչպես դատարանի դահլիճում, այնպես էլ դրսում:

Դիմորդներն ազատ են սահմանելու իրենց սեփական թեման՝ արդարադատության մատչելիության ավելի լայն ուղղության շրջանակներում, սակայն առաջարկները կարող են ներառել, օրինակ.

- Մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության ապահովման իրավական շրջանակներ
- Արդարադատությանը հասնելու համատեքստում մարզինալացված խմբերի առջև ծառայած մարտահրավերները
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը արդարադատության մատչելիության խթանման գործում
- Կոռուպցիայի ազդեցությունը արդարադատության մատչելիության վրա
- Տեխնոլոգիաների և նորարարության դերը արդարադատության մատչելիության բարելավման գործում
- Հակամարտություններից տուժած տարածքներում մարդու իրավունքների և արդարադատության մատչելիության միջև հատման կետեր
- Մարդու իրավունքների միջազգային շրջանակները և դրանց ազդեցությունը ազգային իրավական համակարգերի վրա
- Հայաստանում ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների դեմ պայքարի իրավական շրջանակների և քաղաքականության արդյունավետությունը:

Մարդու իրավունքներ և կոռուպցիա

Այս բաժինը կենտրոնացած է մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիոն պրակտիկայի միջև կապի վրա: Համաժողովը կուսումնասիրի մարդու իրավունքների վրա կոռուպցիայի վնասակար ազդեցությունը և երկու խնդիրների դեմ պայքարի հնարավոր լուծումները:

Դիմորդներն **ազատ են սահմանելու իրենց սեփական թեման**՝ մարդու իրավունքների և կոռուպցիայի ավելի լայն ուղղության շրջանակներում, սակայն առաջարկները կարող են ներառել, օրինակ.

- Կոռուպցիայի և մարդկանց թրաֆիքինգի միջև կապը
- Քաղաքացիական հասարակության դերը կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության գործում
- Կոռուպցիայի և քաղաքական անկայունության միջև եղած հարաբերությունները
- Կոռումպացված պաշտոնյաների և բիզնեսների հետաքննության և պատասխանատվության ենթարկելու մարտահրավերները
- Կոռուպցիայի ազդեցությունը խոցելի իրավիճակներում գտնվող խմբերի վրա, ինչպիսիք են երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և փոքրամասնությունները
- Միջազգային կազմակերպությունների դերը կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության գործում
- Հայաստանում և նրա սահմաններից դուրս կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների խթանման լավագույն փորձը և հաջողված դեպքերը:

Մարդու իրավունքներ և հակամարտությունների լուծում

Մարդու իրավունքները և հակամարտությունների կարգավորումը երկու առանցքային ոլորտներ են, որոնք սերտորեն փոխկապակցված են, հատկապես շարունակաբար բախումներ և հակամարտություններ ապրող երկրներում, ինչպիսին Հայաստանն է: Մարդու իրավունքների և հակամարտությունների կարգավորման փոխհարաբերությունները էական են արդար, խաղաղ և կայուն հասարակություն կառուցելու համար: Հայաստանում մարդու իրավունքների ամենահրատապ խնդիրներից մեկը շարունակվող Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն է: Այս թեմատիկ բաժնի ներքո մենք հրավիրում ենք զեկուցողների, որոնք կքննարկեն հակամարտությունների համատեքստում մարդու իրավունքների խթանման, պաշտպանության և հարգման հետ կապված մարտահրավերներն ու հնարավորությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով Լեռնային Ղարաբաղին:

Դիմորդներն **ազատ են սահմանելու իրենց սեփական թեման**՝ Մարդու իրավունքների և հակամարտությունների կարգավորման ավելի լայն թեմայի շրջանակներում, սակայն առաջարկները կարող են ներառել, օրինակ.

- Մարդու իրավունքների դերը հակամարտությունների կանխարգելման գործում
- Հակամարտության ազդեցությունը մարդու իրավունքների վրա
- Մարդու իրավունքների միջազգային մարմինների դերը հակամարտությունների կարգավորման գործում
- Անցումային արդարադատության մեխանիզմների ազդեցությունը հակամարտությունների կարգավորման վրա

- Քաղաքացիական հասարակության դերը մարդու իրավունքների և խաղաղության ամրապնդման գործում
- Հակամարտության ազդեցությունը խոցելի խմբերի վրա, ինչպիսիք են կանայք, երեխաները և փոքրամասնությունները
- Մարդու իրավունքների մեխանիզմների և դրանց արձագանքների արդյունավետությունը խաղաղության և անվտանգության միջազգային ճգնաժամերի համատեքստում
- Բռնի տեղահանվածների իրավունքները Հայաստանում
- Տեխնոլոգիաների ազդեցությունը մարդու իրավունքների և հակամարտությունների կարգավորման վրա
- Մարդու իրավունքներ և հետկոնֆլիկտային հաշտեցում
- Հակամարտությունների հաջող լուծման և մարդու իրավունքների խթանման ջանքերի դեպքերի ուսումնասիրություն:

Մարդու իրավունքներ և աղքատություն

Այս բաժինը նպատակ ունի ուսումնասիրել աղքատության դեմ պայքարի նորարարական մոտեցումներն ու ռազմավարությունները մարդու իրավունքների տեսանկյունից: Ուսումնասիրելով մարդու իրավունքների և աղքատության միջև փոխհարաբերությունները՝ մենք ձգտում ենք բացահայտել արդար և կայուն լուծումներ՝ արմատախիլ անելու աղքատությունը և ապահովելու յուրաքանչյուր անհատի մարդու իրավունքների կատարումը:

Դիմորդներն **ազատ են սահմանելու իրենց սեփական թեման**՝ մարդու իրավունքների և աղքատության ավելի լայն թեմայի շրջանակներում, սակայն առաջարկները կարող են ներառել, օրինակ.

- Աղքատության հաղթահարում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման միջոցով
- Աղքատության հաղթահարման ռազմավարությունները և դրանց ազդեցությունը մարդու իրավունքների վրա
- Տնտեսական քաղաքականությունները և դրանց հետևանքները աղքատության և մարդու իրավունքների վրա
- Աղքատության գենդերային բաղադրիչը և դրա հետևանքները մարդու իրավունքների վրա
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերը մարդու իրավունքների խթանման և աղքատության կրճատման գործում
- Մարզինալպացված խմբերի հզորացում աղքատության հաղթահարման ջանքերում
- Աղքատություն և շրջակա միջավայրի դեգրադացիա. կապերի և մարդու իրավունքների վրա ունեցած հետևանքների ուսումնասիրություն

- Միջազգային կազմակերպությունների և գործընկերությունների դերը աղքատության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության գործում
- Մարդու իրավունքների տեսանկյունից աղքատությունը չափելու նորարարական մոտեցումներ
- Տեխնոլոգիական առաջընթացի ազդեցությունը աղքատության հաղթահարման և մարդու իրավունքների վրա
- Աղքատության կրճատման և մարդու իրավունքների խթանմանն ուղղված հաջողված դեպքերի ուսումնասիրություն:

Հետազոտության առաջարկների հրավեր

Մենք ընդունում ենք ինչպես անհատական հոդվածների, այնպես էլ ամբողջական պանելային քննարկումների առաջարկներ, որոնք վերաբերում են վերը նշված թեմաներին. Առաջարկություններ կարող են ներկայացվել նաև մարդու իրավունքներին առնչվող այլ հարցերի շուրջ:

Յուրաքանչյուր պանելային քննարկման ամբողջական առաջարկ պետք է ներառի 3 կամ 4 հոդված, գումարած քննարկման դեկավար և քննարկող:

Անհատական հոդվածները առաջարկները պիտի ներառեն.

- Հոդվածի անվանում (առավելագույնը 15 բառ յուրաքանչյուր վերնագրի համար)
- Հոդվածի համառոտագիր (առավելագույնը 500 բառ)
- 350 բառից (կամ ավելի քիչ) բաղկացած ինքնակենսագրական

Պանելային քննարկման առաջարկները պիտի ներառեն.

- Պանելային քննարկման անվանումը (առավելագույնը 15 բառ)
- Պանելային քննարկման թեմա (առավելագույնը 500 բառ)
- Պանելային քննարկման հիմնաբառեր
- Քննարկման յուրաքանչյուր մասնակցի կոնսուլտային տվյալներ և համառոտ անձնական տվյալներ, ներառյալ անուն, ազգանուն, ինստիտուցիոնալ պատկանելություն, էլ. փոստի հասցե և յուրաքանչյուր մասնակցի համար 350 բառից (կամ ավելի քիչ) ինքնակենսագրական:

Անտագիաները պետք է ներկայացվեն մինչև նոյեմբերի 1-ը: Գիտաժողովին ներկայացված աշխատությունները կդիտարկվեն 2024 թվականին հետագա աջակցության համար՝ նպատակ ունենալով տպագրել դրանք ամսագրի կամ ակադեմիական հատորի հատուկ համարում: Համաժողովը կընդունի սահմանափակ քանակությամբ հոդվածներ տարածքի սահմանափակ լինելու պատճառով:

Անտագիաները պետք է ուղարկել Նոնա Գալստյանին հետևյալ էլ.փոստով՝ nona.galstyan@rwi.lu.se

Լեզու

Փաստաթղթերը կարող են ուղարկվել ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն: Համաժողովի ընթացքում պանելային քննարկումները և հոդվածների ներկայացումները կարող են իրականացվել ինչպես հայերենով, այնպես էլ անգլերենով:

Մասնակիցների գրանցում

Համաժողովին կարող են մասնակցել գիտնականներ, ուսանողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոշումներ ընդունողներ և քաղաքականություն մշակողներ, ովքեր զբաղվում կամ հետաքրքրված են Հայաստանում մարդու իրավունքների հետազոտություններով: Համաժողովը կընդունի մինչև 80 մասնակից: Մասնակցության գրանցումը նրանց համար, ովքեր չեն ներկայացնում հոդված կամ պանելային քննարկման մաս կազմում, հասանելի է այստեղ՝ [HERE](#)

Համաժողովի օրը և գտնվելու վայրը

30 նոյեմբեր -1 դեկտեմբեր, Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ

Հարցեր

Համաժողովի հետ կապված բոլոր հարցերը կարող են ուղղվել david.eile@rwi.lu.se էլ. փոստին: